

Վ.Ա.ՇԱՆ ԳՈՂԹՆԱԳԻՆ

ՀԵՏՔԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Վահան Գողթնագին միակ բախտաւոր նահատակն է այն հաղարաւոր Հայերուն մէջ որոնք իրենց մաքուր արիւնով ներկեցին Սիւրիոյ անապատները: Նա միայն ունեցաւ իր պատմադիրը, որ սրտագրաւ տողերով պատկերացուց անոր հերոսական մահը, ունեցաւ իր Շարականը, այնքան զեղեցիկ եւ բանաստեղծական եւ ըստ հաճելի աւանդութեան մը քրոջական սրտէ բղխած:

Մեր պաշտօնական պատմադիրները, Ղեւոնդ Երէց, Վարդան պատմիչ, Կադանկատուացի երբեք չեն յիշատակեր զինքը, մանաւանդ Ղեւոնդ Երէց՝ թերեւս ինքն ալ Գողթնացի, իրենց համար մասնակի զէպը մ'էր եւ չէր կրնար մտնել համահայկական պատմութեան մէջ:

Վահանի պատմութիւնը սերտօրէն կապուած է Նախիջևանի եւ Խրամի եկեղեցիներուն մէջ կատարուած ահաւոր ոճրագործութեան հետ, երբ անարի զէնքով վրէժ կը լուծուէր Վարդանակերտի յաղթական պատերազմին, հրկիզելով բազմաթիւ նախարարներ, կիներ, մանուկներ, այնքան սեւ տառերով գրուած Կազմ ոստիկանին ձեռքով: Քաղաքական մեծ զէպը մ'էր որ կատարուեցաւ, ցմիշտ մահացնելու համար Հայութեան դիմադրական ոյժը, հարաւի հորդաններու զէմ, որ առաւելապէս կեդրոնացած էր ազնուականներու սուրերու փայլին մէջ: Բանակ մը կամ ժողովուրդ մը առանց առաջնորդի ոչ խարնեւ հօտի պիտի վերածուէր եւ այդպէս ալ եղաւ Նախիջևանի սեւ օրերէն վերջ: Արարական պատմիչներ Կրակի տարի կոչեցին այդ թուականը եւ մեր պատմութեան մէջ մնաց քստմենի էջ մը դալու

եւ հանգուցուելու համար 1914-1918-ի եղբրական օրերուն:

Պատմիչները համաձայն չեն Նախիջևանի եւ Խրամի զէպի թուականի մասին: Ղեւոնդ Երէց եւ Վարդան պատմիչ կը համարին թէ կատարուած է էլ-Վալիտ (705-715) մեր հեղինակներու քով Վլիթ կոչուած ամիրապետին իշխանութեան առաջին տարին, այն է 705-ին: Ալիշան ալ այդպէս կ'ընդունի(1): Սակայն Արտաւազը, Երաշխաւորի վանահայրը, որուն կը պարտինք Վահանի վկայագրութիւնը, եւ որ մօտէն հետաքրքրուած է այս զէպերով, մեզի երկու թուական կը նշանակէ. մին(2) « Ի ժամանակս բռնակալութեան տաճկաց, զոր յետ մահուանն առաջնոյ Մահմէտի, յուքսուս եւ հիմգ ամի իւրեան... Ի վերակացութեան Արդմեւիքայ որդւոյ Մրուանայ»: Մահմէտի 85 թուականը կը համապատասխանէ քրիստոնէական 704 թուականին: Երաշխաւոր արար պատմիչն ալ Նախիջևանի զէպը կը դնէ Արդմեւիքի ամիրայութեան վերջին տարին (685-704): Եթէ Ղեւոնդ եւ Վարդան էլ-Վալիտի առաջին տարին կը դնեն՝ զարմանալու չենք, վասնզի այն ատենները ճայնապիւր կամ հեռագիր չունէին որ լուրերը աշխարհիս շուրջ դառնային մէկ երկու վայրկեանի մէջ, որով մենք կրնանք հաստատուն բռնել 704 թուականը իբրեւ հրկիզումի տարին: Սակայն Երաշխաւորի վանահայրը ուրիշ թուական մ'ալ կու տայ

(1) Յուշիկը Հայրենեաց Հայոց, էջ 131:

(2) Սոփերք հայկականը, հատոր ԺԳ. Վենետիկ 1854, էջ 13:

մեզի(3). «Եւ լինէր այս չարութեան խորհուրդ ի վեշտասաներորդ ամի իշխանութեանն Արդմեւիքայ, որպէս չարեօք կործանեաց զերկիրս Հայոց մինչեւ յօր մահուան իւրոյ...»: Արդմեւիք իշխած է 685-704-ին, վերի պարբերութենէն կը հասկըցուի թէ արդէն 701-էն սկսեալ կը խորհէր հայ ժողովուրդի զերեմանը փորել հեղինակին ալ արդէն «Եւ լինէր այս խորհուրդ չարութեան» բացատրութիւնը նոյն բանը կ'ուղէ հասկցնել: Հաւանական է որ հայ ազնուականներու բնաջնջումի ծրարը յղացուած ըլլայ Վարդանակերտի զիրը յղացուած ըլլայ Վարդանակերտի պարտութեան իբրեւ փոխվրէժ եւ մենք կրնանք հասկնալ Արտաւազը վանահօր «Ի վեշտասաներորդ ամի իշխանութեանն Արդմեւիքայ» թուականը 701 իբրեւ Վարդանակերտի պատերազմին ստոյգ տարին՝ ուսկից ծաղում առաւ դիւային խորհուրդը:

Էլ-Վալիտի հրամանով յաջորդ տարին՝ այն է 705-ին, Դուինի մէջ կեդրոնացման զաշտը կը հաւաքեն բազմահազար զերիներ, զինուորական, ազնուական, կիներ, երեխաներ, որոնցմէ շատերը սովամահ կ'ըլլան եւ մնացածները կը քուլին Սիւրիոյ անապատները վաճառքի եւ ծառարիոյ անապատները վաճառքի եւ Գողթնի յութեան համար: Ասոնց մէջն էր Գողթնի նահատակ նախարարին Խոսրովի սրտին ծաղիկը՝ չորս տարեկան փոքրիկ Վահանը. անշուշտ այս շուշանափայլ պարանոցին վրան ալ դրին կրակէ կնիքը տաժանելի ճամբորդութեամբ զէպի Սիւրիա քշելու:

Վկայագիրը կ'ըսէ թէ հազիւ չորս տարեկան էր, ուրեմն Գողթնագին ծնած կ'ըլլայ 702-ին:

Երաշխաւորի վանահայրը, որ զինքը ճանչցած էր, թէպէտ քանի մը օրուան համար, զգայուն տողերով կը նկարագրէ Վահանի հոգեկան ձիրքերը. նա մտացի էր, լեզուներու յարմար, զարնանային

վարդի մը զեղեցիկութիւնն ունէր եւ իմաստուն ծերունիի մը լրջութիւնը:

Էլ-Վալիտ ամիրապետի արքունիքին մէջ մեծցաւ եւ անդիտակից իր քրիստոնէական կրօնքին՝ ընդգրկեց մահմետականութիւնը. նա եղաւ հարաւի դաւանանքին խայտաբղէտ ըմբռնումներու խոր մասնագետ, փոքրիկ չէյն մը որ զարմանք կ'ազդէր ալահի կարծեցեալ իմաստուններուն: Էլ-Վալիտի եւ անոր յաջորդ Սիւրէյմանի (715-7) ժամանակները տակաւին երեսայ էր. Վահանի քաղաքական եւ անձնական զէմքը կը դժուի Օմար-Պէն-Ապտէլ-Ազիզի (717-720) ժամանակ, զոր մեր պատմիչները լուի Օմար կը կոչեն, երբ արդէն 17 տարեկան, դարձաւ արքունի զրազիր իր հրաշալի արաբերէնով եւ զեղազրութեամբ: Մեծ պաշտօն էր 17 տարեկան պարմանի մը համար եւ Օմար մասնաւոր սէր մը ունէր այդ զերի եւ որբ երիտասարդին վրայ: Ամիրապետութեան երկրորդ տարին, իր բարութեամբ համար թէ ստիպուած Հայաստանի բողոքներուն վրա, հրովարտակ հանեց որով բոլոր Սիւրիոյ մէջ տարիներով զերի տանջուած Հայերը պիտի կարենային վերադառնալ հայրենիք: Վկայագրութեան երկրորդ եւ հարեւրէ: Վկայագրութեան երկրորդ եւ համոտ խմբագրութիւնը(4) սխալմամբ էլ-Վալիտին կը վերադրէ այս զերեղարձը: Հաղարաւոր կարաւաններ սկսան բռնել հիւսիս ճամբան: Տասնմէկ երկար տարիներ անցած էին, հայրենիքի կարօտը, սիրելիներու տենչը կ'այրէր իրենց սրտերը: Ո՛վ գիտէ քանինն էր հայրենի կարօտը իրենց սրտին մէջ թաղուեցան անապատներու տաք աւաղին տակ եւ Հայաստանի օրհնեալ հողէն ափ մը նետող չեղաւ իրենց շիրիմներուն վրայ: Այդ ժամանակի կարաւաններու սովորական ճամբան կ'անցնէր Դամասկոս-Բալթիր-Ռաքա-Եդեսիա եւ անկից Մալաթիոյ վրայէն Հայաստան:

(4) Սոփերք ԺԳ, էջ 66:

(3) Սոփերք, ԺԳ, էջ 18:

յաղթանակ մը տարած խաղերներու վրայ Պաքուի հիւսիսը, կը վերադառնային իրենց աշխարհը. Վահան միացաւ անոնց, արդէն լեզունին դիտէր, ծանօթ էր անոնց կրօնական հարցերուն՝ անուանի չեխերէն աւելի: Ծամբան վիճարանելով քրիստոնէական եւ մահմետական կրօնքներու մասին, նա կտրեց ընդարձակ աշխարհներ: Պատմագիրը մեզի չ'աւանդէր թէ ի՞նչ ճամբայ բռնեց, Արծկէ - Ֆաղէշ - Տիւրանակերտ - Եդեսիա՞, թէ խորհրդ - Մալաթիայի վրայէն անցաւ Եդեսիա իջնելու համար: Հաւանական է Տիւրանակերտի ուղին, որ առեւտրական ճամբայ եւս էր հին դարերէն, երբ Վասպուրականցիներ իրենց ոսկեղէն շինուածներ եւ ազած տառելի մինչեւ Անտիոք կը հասցընէին: Աւելի քան 400 քիլոմետր ճամբայ մը ունէր իր առջեւ Արծկէ-Եդեսիա, եւ անշուշտ ամիս մը ժամանակ պէտք էր կտրելու համար այդ տարածութիւնը:

Եդեսիա՝ Վահանի համար սիրովիչ հանդերձան մը եղաւ. հոն դաւաւ անշուշտ հայ վանականներ, Հայեր եւ մանաւանդ Քրիստոսի համբաւաւոր Դաստաւաղը: Եդեսիա մեծ ուխտատեղի էր բոլոր Արեւելի քրիստոնեաներուն: Մահմետականներն ալ մասնաւոր յարգանք ունէին սուրբ Դաստաւաղին(5): Պատմագիրը մեզի չ'ըսէր թէ ո՞րքան ժամանակ մնաց Եդեսիայի մէջ եւ անշուշտ հոս բաժնուեցաւ իր մահմետական ուղեկիցներէն եւ առանձին իր երիտասարդ բնկերոջ հետ իջաւ Աստուածաշունչի խառն քաղաքը, այնքան համբաւաւոր երբեմն իր Աստարոտ զիցուհիով:

(5) Ըստ հին աւանդութեան՝ Քրիստոսի Դաստաւաղը երկար դարեր կորսուած կը մնար քարայրի մը մէջ՝ քաղաքին արեւելեան կողմը եւ հայ կրօնաւորներ զայն կը գտնեն: Արարական տիւրապետութեան շրջանին երեք դար կը մնայ այլազգիներուն ձեռքը, մինչեւ որ Բիզանդիոնի կայսրները 12,000 արծաթի եւ 200 գերեզներու փոխարէն

Խառն Եդեսիայէն 27 մղոն հարաւ է համանուն գետին վրայ, ապա 62 քիլոմետր աւելի հարաւ անպատճառ իջեւանեցաւ Թէլ-Ապիատ (Ճերմակ բլուր), հետեւելով արդի Պալիք գետակին ձախ ափունքին: Թէլ-Ապիատը Սիւրիոյ հնազոյն քաղաքներէն էր եւ Լաբանի հայրենիքը, ուր Արահամ երկար ժամանակ մնաց եւ Յակոբ եկաւ ջրհորին մօտ Հռաքելը գտնելու: Պալիք գետակը Թէլ-Ապիատէն կ'իջնէ հարաւ՝ խառնուելու համար Եփրատի, որուն ձախ ափունքէն եւ անապատի մէջջն արահետ մը կ'առաջնորդէ 107 մղոն երկարութեան վրայ դէպի Ռաքքա(6) գիւղաքաղաքը, նշանաւոր իր հնութեամբ եւ Հարուն-Էլ-Ռաշիտի (786-809) սիրած ամարանոցը:

Վահան Գողթնացիին նպատակն էր երթալ մինչեւ Դամասկոս եւ հոն անձամբ ներկայանալ ամիրապետին, սակայն Ռաքքայի մէջ լսեց թէ Հիշամ (724-743), որ ժամանակին ամիրապետն էր, Ռուծափ կը գտնուէր:

Երաշխաւորի վանահայրը Արտաւաղը վկայադիրը Ռուծափ կը կոչէ այն հրաշալի քաղաքը, որ Ռաքքայէն քառասուն մղոն հարաւ արեւմուտք Եփրատի աջ ափին վրայ կը գտնուի այսօր ալ իր երբեմնի փառքերը հիւսող աւերակներով: Ինչպէս Սիւրիոյ եւ Միջագետքի բոլոր քաղաքները, Ռուծափ ալ նախաքրիստոնէական հին դարերուն կը պատկանի. Ասորական վաւերագրերը եւ Աստուածաշունչը զայն կը յիշատակեն Սենեքերիմի(7) ժամանակ՝ երբ պաշարած էր Երուսաղէմը եւ

եւ կ'առնէ: Սակայն մեր պատմիչէն կը հասկըցուի որ Վահան Դաստաւաղը գտաւ քրիստոնեաներու քով, տակաւին Արարներու ձեռքը չ'անցած:

(6) Կալանեկոս ալ կոչուած է Ռաքքան, Քուրնիկոս լատին բառէն, Կարակալա կայսեր ժամանակէն, ապա կոչուեցաւ Նիկիփորիոն:

(7) Դ. Թագ. ԺԹ. 12:

պատուիրակներու ձեռքով կը սպաննար կործանել Աստուծոյ քաղաքը, ըսելով Եդեսիա թագաւորին:

— «Միթէ փրկեցի՞ն զնոսա աստուածք աղագն զորս ապականեցին հարքն իմ՝ ըզ-Գողթան, եւ զՔառան եւ զՌափաք եւ զորդիսն Եդոմայ առ ծովեղերը...»:

Ինչո՞ւ մեր Աստուածաշունչը Ռափաթ թարգմաններ է, երբ իսկական անունը Ռէսէֆ էր կամ Ռոսաֆա, յայտնի չէ. այսօր ալ նոյն աւերակները Ռէսաֆէ կամ Ալ-Ռուսաֆա կը կոչուին արաբացած ձեւով:

Հռոմէական շրջանին Ռուծափը կը փոխուի Սարգիսուպոլիս. հոն էր, ըստ Հիթթիի(8) Սարգիս գինուորականին ծրնրեղաւայրը, որ նահատակուեցաւ 305 թուականին Դիոկղետիանոս կայսեր ժամանակ. ուրիշներ, ինչպէս մեր Յայամաւորքը, հռոմէացի Սարգիս աղնուականին նահատակութեան տեղը կը համարին եւ մեր տօնացոյցին մէջ Սարգիսի եւ Բագոսի անունով կը ճանչցուի:

Ռուծափ կոչուած է նաեւ Անաստասուպոլիս՝ երբ Անաստաս կայսրը (491-518) Ս. Սարգիսի վրայ շինեց հոյակապ տաճար մը եւ բարձրացուց պաշտպանութեան պարիսպներ: Հակառակ յունական այս անուններուն, ժողովրդեան բերնին մէջ կենդանի կը մնար Ռոսաֆա կամ մեր Ռուծափ անունը եւ Վահան Գողթնացին այդ անունով կը ճանչնար զայն՝ որ իր նահատակութեան վայրը պիտի ըլլար օր մը:

Գողթնացիի ժամանակ Ռուծափն իր պարիսպներուն մէջ կը պահէր մեծամասնութեամբ Յոյն, Ասորի Յակոբիկեաններ եւ Արաբներ: Հիշամ զոր մեր պատմիչը Շամ իշխան Տաեկաց կ'անուանէ, հոն կը բնակէր զանազան պատճառներով. նախ աւելի չոր կլիմայ ունէր քան Դամասկոսը եւ ինքը յօդացաւէ կը տառապէր, երկրորդ՝ Դամասկոսի մէջ ժամտախտ կար

(8) Պատմութիւն Սիւրիոյ, Լոնտոն, 1951:

եւ քաղաքական խռովութիւններու կեդրոնն էր:

Վկայադիրը Ռոսաֆէ հասցնելէն վերջ Գողթնացի հերոսը, իր գրութեան կու տայ սուրբերու վարքի սովորական ոճը: Վահան կը դժուարի իր աղքատին եւ անծանօթ կերպարանքով ներկայանալ Հիշամին. բռնաւորը շրջապատուած էր անթափանցելի սահակներով եւ դռներով. նա կ'ուզէր անպայման իր ինքնութիւնը յայտնել աղատելու համար հայրենիքը զինքը փնտռողներու սարսափէն: Գտաւ վերջապէս Համացի իշխան մը, իրեն ծանօթ, որ քաղութիւն ունեցաւ իսլամութենէ քրիստոնէութեան վերադարձած Վահանի մասին խօսիլ: Հիշամ զինքը չէր ճանչնար ու թերեւս չէր ալ հետաքրքրուած իրմով, սակայն պետական դադունի սպասարկութիւնը, աւելի կրօնական մոլեռանդութեամբ քան պետական հրահանգով զինքը կը հետապնդէր: Դարձեալ քրիստոնեայ ըլլալու տապնդէր: Դարձեալ քրիստոնեայ ըլլալու տապնդէր: Դարձեալ սպաննելու համար, սակայն քաջ նահատակին փառքն անոր մէջ է որ արհամարհեց ամէն շուայանք ու պատիւ ու սիրով երկարեց իր պարանոցը մեռնելու համար Քրիստոսի սիրոյն:

Ռուծափի Յոյն, Յակոբիկեան կամ Նեստորական քրիստոնեաներն ալ սարսափի տորական քրիստոնեաներն ալ մէջ էին այդ օրերը. քրիստոնեայ մը կը մեղէին այդ օրերը. քրիստոնեայ մահմետաւոր, թերեւս մոլեռանդ մահմետական խուժանը ջարդի սկսէր, ամէն ոք իր տունը քաշուած անձկութեամբ կը սպասէր որ փոթորիկը անցնէր:

Վահան զիւցաղնական մահով փառաւորեց իր կրօնքն ու հայրենիքը:

Հակառակ սովորութեան, որ մահապարտներու մարմինները չուներուն կը նետուէին, պետական մոմսնետիկ ելաւ հրաման տալու որ քրիստոնեաները առնեն Վահանին մարմինը եւ իրենց կրօնքին համեմատ թաղեն: Ռուծափի մէջ կային զանազան ծէսեր եւ քրիստոնէական համայնք-

ներ, ինչպէս նաեւ ֆալսիֆիկատներ որոնք կը համաձայնին քաղաքէն դուրս թողել օտարականներու զերեզմանոցին մէջ: Սակայն վկայաւորը Վահանի մահէն եօթը տարի յետոյ արդէն տեսած էր աղիւսակերտ եկեղեցի մը քաղաքին մէջ եւ երբ հրաշքները կը բաղմանան եւ ուխտաւորները կը շատնան, տեղացի քրիստոնեաները կը բարձրացնեն վայելուչ եկեղեցի մը:

Վկայաւորը որոշապէս կը բացատրէ թէ սուրբին մարմինը Վկայարան դրին եւ ոչ թէ եկեղեցի: Այսօր ալ Ռասաֆայի մէջ պարիսպներուն հարաւային կողմը կը դուռնուի քառանկիւն վկայարանը, որուն աւազ խորանը երեք կամարներու տակ կը պահէ իր հին կառուցուածքը: Վկայարանէն տարբեր եկեղեցի է Ս. Սարգիսի նուիրուած Պաղիլիֆան, որ կը բռնէ քաղաքին արեւելեան կողմը եւ աւելի վեհաշուք է իր բովանդակ շինութեամբ: Կը խորհրդաթէ պեղումներով կարելի պիտի ըլլայ երեւան հանել Ս. Վահանի դամբարանը, եթէ թափառական պետեւիներ չեն խախտած եւ աւերած զայն, ոսկեղէն հնութիւններ փնտռելու համար:

Երաշխաւորի վանահայրը թէպէտ իր համառօտ վկայարանութեան մէջ ամէն բան մանրամասն նկարագրած է Վահանի նահատակութեան ժամանակ, սակայն դեռ փոքրիկ տարակոյս մը կը մնայ անոր մահուան թուականին մասին:

Վկայարանը իր գրութեան մէջ կ'ըսէ. — «Արդ յետ ըմպելոյ զբաժակ պատուհասի աշխարհիս Հայոց ի հարիւր յիսուն եւ երկու թուականին Հայոց (կ'ակնարկէ Նախիջևանի հրկիզումը) այս գործեցաւ, եւ զերեսուն եւ չորք ամս կացին ի գերութեան մինչեւ ի հարիւր եւ ութսուն եւ վեց ամ թուականին, յորում հանդիպեալ վրակալութիւն սրբոյն Վահանայ...» (9):

(9) Սոփերք, ԺԳ. էջ 58:

Հեղինակին 152 Հայոց թուականը կը համապատասխանէ 703-ին, երբ կատարուած է Նախիջևանի եւ Խրամի հրկիզումը: Յաջորդ երկու թուականներն ալ՝ այն է նահատակութեան տարին, Հայոց 186 թուականին եւ գերութեան 34 տարին կու գան կը հանդիպին 737 թուականին, այն է Հիլամի ամիրայութեան 13րդ տարին. սակայն նոյն հեղինակին համեմատ, երբ յատկապէս կը խօսի Նախիջևանի ոճիրին վրայ, կը նշանակէ Մահմէտի 85 թուականը, որ կը համապատասխանէ մեր 704 թուականին, եւ կ'իշխայ Արդմեւելիքի վերջին տարին: Հարկ է ընդունել որ այս մէկ տարուան տարբերութիւնը կրնայ գրչագիրներու օրինակութեան սխալ ըլլալ. արդէն Հ. Արշան(10) 738-ին կը դնէ նահատակութեան տարին, Ապրիլ 18, երեկոյեան ժամը 3-ին աւազ երկուշաբթի օր: Սոյն թուականին համաձայն է նաեւ Յայսմաւուրը՝ զնելով ի թուին Հայոց ՃԶԷ (738), թուական մը զոր կ'ընդունին նաեւ Աւգերեան(11):

Անշուշտ Հայաստանի մէջ լսուեցաւ քաջ նահատակին դիւցազնական մահը, թէպէտ շատեր կը նահատակուէին այդ շրջաններուն, սակայն Վահանի դործը եւ զական էր եւ արժանի կտակելու դարերուն:

Երաշխաւոր վանքին վանահայրը՝ Արտաւադը կը թուի իր բոյնէն եւ հասնելով մինչեւ Ռուծափ, հակառակ վտանգաւոր ճամբաներու, իր սիրոյ եւ յարգանքի տուրքը կու տայ հայրենիքի մեծ զաւակին որ նոր աստղի մը պէս կու գար յաւերժօրէն փայլելու մեր երկնակամարին վրայ: Նա միայն ըմբռնած եւ հասկցած էր Գողթնեցիին պանդխտութեան ժամանակ, անոր

(10) Յուլիկը Հայրենեաց Հայոց, Վենետիկ, տպ. 1921, էջ 169:

(11) Լիակատար վարք սրբոց, հատոր Բ. Վենետիկ, 1810, էջ 216:

հոգեկան մեծութիւնը եւ քանի մը օրը բաւական եղած էին սիրով կապուելու այդ չարչարուած եւ անվեհեր սրտին հետ:

Մենք իրեն կը պարտինք այս համառօտ բայց զեղեցիկ վկայարանութիւնը. աւա՛ղ որ պակասաւոր հասած է: Նա իր գրութեան մէջ յայտնապէս կ'ըսէ՝ թէ շատ բաներ գրած է, չէ բաւականացած Ռուծափի մէջ գրի առնուածներէն սուրբին վերջին ժամերու մասին, ուղած է ամբողջ

ջական դործ մը ձգել՝ պատկերացնելով այդ դժբախտ օրերուն լիակատար հորիզոնը: Մենք պիտի ունենայինք Եղիշէի սրտով, Փաւստոսի զեղեցկութեամբ եւ Խորենացիի աղգանուէր հոգիով ընդելուզուած մատեան մը:

Հ. ՎԱՀԱՆ ԶՈՎԱՆՆԵՍԵԱՆ

Հալէպ, 22 Յունուար 1953
Տօն Ս. Վահան Գողթնեցիի

ՊԵՆԱՏՀՈՐԻ ԱՐԱՔ ՊԱՏՄԱԳԻՐԸ

ԵՆ

ՀԱՅԵՐԸ

Պենատհորի կեանքը

Շատ քիչ բան, գրեթէ ոչինչ գիտենք Պենատհորի ընտանիքին ու անոր ծագումին մասին: Շատեր գրեցին անոր կենսագրութիւնը, բայց անոնց գործերը կորուսեցան, կամ զոնէ մեզի չհասան: Անոր պտպը ծապըր Պըն Տաուտ՝ Խաւիպի քարտուղար եղած էր, երբ Խաւիպի Հարուն էլ Բաշիտի ժամանակ (786-809) պարենաւորման նախարար էր:

Ինքը հեղինակը Ահմէտ Պըն Եահիա Պըն ծապըր Ալ-Պենատհորի ծնաւ Պաղատտ, Հէճիրէի երկրորդ դարուն վերջերը (թ. դար), դաստիարակուեցաւ Պաղատտի մէջ եւ հոն շատ հմուտ մարդերու դասախօսուածութիւններուն ունկնդրեց: Թէ ե'րբ հանրաթիւններուն ունկնդրեց՝ իր կեանքին մէջ՝ որ է գրել մեծ զի գործ մը Արար պետութեան պատմութեան մասին, եւ անոր հասնելու համար վաստըր-կիլ, շահիլ մեծամեծներու բարեացակա-

մութիւնը: Պենատհորի մեծապէս յաջողեցաւ այս ձեռնարկին մէջ:

Թէ ի'նչ ընդունելութիւն ըրաւ ալ-Մամուն Խալիֆան (813-833) անոր բանաստեղծութիւններուն՝ իրեն ի պատիւ գրուած, չենք գիտեր: Բայց Մուդաուաքըլ Խալիֆան (847-861) զինքը մեծապէս կը պատուէր:

Երկիրներու նուաճման գրքին մէջ, էջ 146, կը պատմէ փոքրիկ պատմութիւն մը՝ Խալիֆային (862-866): Ապա Ալի Ադ-Դանուսի կը պատմէ թէ Պենատհորի միշտ զրամէն կը փախչէր, ուրիշներէն երբեք նուէր չէր խնդրեր, եւ ոչ ալ ապրուստը շահելու արուեստը գիտէր: Ալ-Մուդաւի'ն շահելու արուեստը գիտէր: Ալ-Մուդաւի'ն Խալիֆան զինքը քաջալերելու եւ ապրուստը հոգալու համար անոր տուաւ 7000 տիւնար:

252-ին (866) երբ ալ-Մուդաւի'ն Խալիֆան հրաժարեցաւ եւ անոր յաջորդեց ալ-Մուդաւի'ն, նորէն անոր քով շնորհ գտաւ,